

377

Հ-28



ՀԱՅՈՐԳԻ

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՒ ՃԵՄԱՐԱՆԻ
ՀԱՇՅԻՆՆԵՐԸ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵԹԳՐԱԶԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ.Ն. ԱՂԱՆԵԱՆՅԻ ՊՈԼԻՑ 7
1908

328
2-28 և ր.

0 120-10

300
1452-24

ՀԱՅՈՐԴԻ



ՋԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ՆԱՀԱՏԱԿՈՒՄ



ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԹՈՂՈՎԸ ԵՒ ՋԵՄԱՐԱՆԻ
ՀԱՇՎԻՆԵՐԸ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵԹՐԱԶԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՅԻ ՊՈԼԻՑ. 7
1908

1003
19073

06 JUN 2013

4470032

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՌՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ

Վաղարշապատում կայ երկու հաստատութիւն—
 Էջմիածին և Ճեմարան, որոնց կեանքով մարդ չհետա-
 քըքրուել չի կարող, մանաւանդ երբ հեռու չի ապրում
 այդ հաստատութիւններից: Չմոռանաւք, որ Էջմիա-
 ծինը տակաւին համայն հայութեան և նրա տարադիր
 հատուածների շաղկապման օղն է, նրա հոգևոր կրօ-
 նական կեանքը դաշնակեցութիւն յաւակնութիւն ունեցող
 միջուկը—կենդրոնը,—իսկ Ճեմարանը ազգային միակ
 բարձրագոյն կրթական հաստատութիւնը, հայ ցիր ու
 ցան հօտին արժանաւոր հովիւներ, հայ դպրոցներին
 պատրաստուած ուսուցիչներ, հայ գրականութեան ու-
 ղիկ հայերէնով գրող հեղինակներ, հայ հասարակու-
 թեան աւելի կազմակերպուած ու շիտակ քաղաքացի-
 ներ պատրաստելու և մատակարարելու որոշ աստիճա-
 նի յարմարութիւններով օժտուած մի հատիկ կրթա-
 վայրը: Էջմիածնում նստող Հովուապետն է այն կեն-
 դանի միջնորդ բերանը, որով չարատանջ հայ ազգը
 իւր այլրոց կարիքների, ժահրոտ վէրքերի, քաղաքա-
 կան իրաւադուրկ, տիրաբուծանդակ կեանքի նկարա-
 գիրն է դնում աշխարհի պետերի առաջ, իւր արդար
 բողոքն է հասցնում նրանց վեհադրոշմ լսողութեան և
 վերջիններիս որոշման իրազեկ լինումն այդ Հով-
 ւապետի միջոցով... Ուրեմն: Ասել աւելին, հեռու կը
 տանի շատ: Սակայն անհնարին է այստեղ չիշատա-
 կել միջավայրին յատուկ, թէև մասնակի, բայց ինքնա-
 տիպ մի հանգամանք, որ մարդու համարեա բոնադա-

տում, հարկադրում է հետաքրքրուել վանքի առանձին կեանքով: Այդ՝ բամբասանքի այն պղտոր հոսանքն է, որ յայտուեն կոհակների մէջ, սակաւ բացառութեամբ, թեւատարած լողում է էջմիածնի իւրաքանչիւր միաբան: Վանքի մթնոլորտն անգամ վարակուած է սաէկոսէների տաւարովանդակ յերիւրանքով, որոնց համար միշտ և ամեն անգամ ականջ փակելու հնարաւորութիւնից զրկուած է մարդ, մանաւանդ երբ շփումն ու յարաբերութիւն ունի վանականների հետ...

Դեռ անցեալ ուս. տարուայ մայիս ամսին որոշ անհատների փշմամբ էջմիածնի օդն սկսել էր տարուբերուել, և յամառ լուրեր էին արտաւում, որ ձեմարանի հաշիւները տարւում են խիստ վայրկիւրոյ: Երբ ձեմարանի ելից և մաից մատեանները մի մի քառու են, որ իջնում, խոնարհում է միաբանների ձեմարանի վարչութեան ու ^{հարկադրում} ~~միաբանների~~ նկատմամբ ունեցած վստահութեան նօժարը, են, են: Այդ շղակներն աւելի զօրեղանում էին մի «թախում» «միաբանակից եղբայրների» խցիկներից դուրս եկած այն «արժանահաւատ» լուրերով, թէ մի փոքր ևս, ու էջմիածինը յաւեական կազատուի վարդապետների ակնկալութիւնները չարգարացնող տեսչից, և Մինաս Բերբերեանի ոտի հետքերի տեղն անգամ կը քերեն, քամուն կը սան...

Մտքերի այս յուզուած միջոցին՝ յանկարծ լսեցինք, որ Սինոդի կարգադրութեամբ երեք հոգուց կազմուած վերստուգիչ յանձնաժողովն արդէն ձեռք է զարկել ձեմարանի հաշիւների քննութեան և իւր աշխատանքներն սկսել է միշտ այն օրը, երբ ձեմարանի ամբողջ վարչութիւնն զբաղուած էր այն երեկոյ «յօգուտ կ. ձ. Բ. Ընկերութեան Վաղարշապատի ճիւղի» ձեմարանի դահլիճում գրուելի գրական-երաժշտական և բեկոյթի պատրաստութեամբ: Այդ անսպասելիութիւնը

բացատրում էր (իսկութեան համար՝ ձեռնպահ եմ) ձեմարանի վարչութիւնը յանկարծակիի բերելու նըրբամտութեամբ... Թէ քանի օր, ինչ ձեռով և որպիսի յաջողականութեամբ վերստուգիչ յանձնաժողովն առաջ տարաւ իւր քննութիւնն ու վերջացրեց, ստոյգը չիմացանք. իրողութիւն էր միայն այն, որ մինչ վերաքննիչ սուրբ հայրերը ձեմարանի Դիւանում մատեաններ էին քրքրում, վանքում վրդովեցուցիչ լուրերը լեզու առած՝ առում, սրտմտւում էին, որ բարձրագոյն զպրոցում հաշիւներ պահելու տեղ աչքակապութիւն է արուած, կարգի և օրինականութեան փոխարէն ապօրինութիւն է տիրում, ամեն ինչ տնօրինուել ու կարգադրուել է կամայականօրէն և քմահաճոյքով...:

Մտքերն ալեկոծող այդ օգտաւարած լուրերը կարծես ճշմարտութեան սանկցիայ առան այն իրողութեամբ, որ Ամենապատիւ Տ. Տեղապահը պաշտօնական գրութեամբ երկու օրուայ ընթացքում ձեմարանի պ. տեսչին և՛ արձակեց և ապա կրկին յետ վերցրեց իւր արձակման թուղթը ու այդպիսով մի քար ևս զլորեց մտքերի ալեծուխ ծովը, թէ և, ինչպէս յետոյ խմացանք, նա իւր արձակման հրամանը պատճառարանած է եղել Փոխարքայի պահանջողական թղթով... Մի քանի օրից՝ «թախումաւոր» միաբանների խմբակն իբրև աւետիք հաղորդում, ձայն էր տարածում, որ սոսկալի գեղծումներով հարուստ ձեմարանի հաշիւների քննութիւնը վերստուգիչ յանձնաժողովն արդէն յանձնել է Սինօդին ի բարեհայեցողութիւն, և այդ առթիւ էլ շուտով կը կազմուի պատշաճաւոր օրագրութիւն:

Երկար սպասեցիմք Սինօդի հետաքրքրական այդ օրագրութեան լոյս աշխարհ գալուն, բայց ի դուրս՝ Վերջը «Ջանդակի» մէջ կարդացիմք վերաքննիչների աւագրաւ նամակը, որտեղ նրանք իրենց ջատագովե-

լուց յետոյ՝ ի լուր ընթերցող հասարակութեան յայտարարում են իրենց քննութեան արդիւնքը: Հետաքրքրութեան և շօշափած խնդիրը պարզարանելու անհրաժեշտութեան պատճառով առաջ ենք բերում նամակի երկու պարբերութիւնը.

«Քննիչ յանձնաժողովը ձեմարանի և մտից հաշիւները քննել է ամենայն անաչառութեամբ, աջալրջութեամբ և կարող ընդունակութեամբ (ընդգծածը մերն է) և վերջացրել էր որչափ իրենից էր կախուած առանց գործը «կիսատ» թողնելու, չնայելով որ շատ անախորժութիւնների հանդիպեց նա ձեմարանի վարչութեան կողմից:

«... Միայն այս չափը առ այժմ ասել պէտք ենք ձեմարում, որ քննութեան արդիւնքը ձեմարանի ներկայ վարչութեանը պատիւ չի բերում»:

Այս նամակը, վանքի մէջ շարունակող ասէ կօսէները, ձեմարանի հաշիւների քննութեան եզրակացութեան հրատարակութիւնը և վերջապէս «Հովիւ» շաբաթաթերթի № 36 «Արգահատելի վիճակ» ցաւմալից առաջնորդող մեզ ստիպեցին տեղն ու տեղը իրազեկ լինել թէ Վերստուգիչ յանձնաժողովի քննութեան և թէ ձեմարանի հաշիւներին ու աշխատել հրապարակ հանել իրերի իսկական պատկերը, մանաւանդ որ վանքի տարաշէշտ փսփսոցի մէջ ակնյայտնի ինսինուացիայից զատ՝ մենք նկատում էինք վարդապետական խոցերին յատուկ փոքրօգի մեքենայութեան խայտառակ մի պատկեր...

Եջմիածնի Սինոդի նշանակած Վերստուգիչ յանձնաժողովը քննելով ձեմարանի ^{1907/08} ուս. տարուայ ելից և մտից մատենաններն ու հաշիւները՝ գտել է (իսկապէս որ գտել է!!) հետեւեալը.

«Տնտեսական ծախքերի համար ներկայացրած ապացուցաթղթերի մեծը մասը դրամներն ստացողի կամ ապրանքավաճառների ստորագրութիւնը չեն կրում, այլ ձեմարանի տնտեսի, երբեմն էլ ձեմարանի վերակացունների ստորագրութիւնը, որոնք և՛ գնող են եղել և՛ հաշիւ ներկայացնող»:

Այդպիսի յօդուածներ են՝

Ա. ¹/₈, 10, 25, 25, 35,

Բ. ²/₉, ¹¹⁷/₂₆₃, ¹²⁰/₂₆₆, ¹⁴²/₃₂₂;

Գ. ²/₁₂, ¹⁰⁰/₂₁₇, ¹⁴²/₃₂₃;

Դ. ¹⁶/₇₀, ³⁰/₈₉, ⁴⁵/₁₂₅;

Ե. ²/₁₃, ⁴³/₁₂₁₋₁₂₂, ⁴⁴/₁₂₄, ⁵¹/₁₃₁, ⁷⁶/₁₇₆, ⁷⁶/₁₇₈, ¹⁷⁹/₁₈₄, ⁹³/₂₀₄, ⁹⁵/₂₀₇, ¹⁰⁰/₂₁₈, ¹¹⁶/₂₆₀, ¹³¹/₂₉₃, ¹³⁹/₃₀₇, ¹⁴⁰/₃₁₄, ¹⁴⁹/₃₃₁

Զ. ⁵/₂₉, ³³/₉₄, ⁵⁷/₃₉, ⁶⁸/₁₅₃, ¹¹⁶/₂₅₉;

Է. ⁹/₅₂₋₅₃;

Այս կոտորակների համարիչները ցոյց են տալիս օրդերների, իսկ յայտարարները՝ նրանց կցած յօդուածների № №-ը:

ձեմարանի դիւանում մի առ մի աչքի անցնելով վերստուգիչ յանձնաժողովի մէջ տեղ բերած այս օրդերներն ու յօդուածները, մեր շրթունքներն ակամայ շըշնջացին. «Յիրաւի մէկին այդ աստիճան վատսիրտ թըշնամի լինելուց յետոյ՝ մարդ պէտք է հաղին միայն խիղճը ոսկրացած վարդապետի լայնափէշ սև վերարկու ունենայ, որպէսզի առեւտրս ծածկել, պարտկել կարողանայ իւր դժոխք հոգու դժոխային այլանդակութիւնը»... Սակայն լաւ է, եթէ լեզու տանք փաստերին, նրանք խօսեն թող.

Ա. № № ¹/₈, 10, 21, 25, 35 օրդերների դումարները վճարուած են դեռ ¹⁹⁰⁶/₀₇ ուսումնական տարուայ

ուսուցիչներին և պաշտօնականների մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս և օգոստոս ամիսների ոռճիկների մի մասը, ընդամենը 3092 ո. 55 կ., որոնց համար և ոռճիկների պատշաճաւոր մատեանում կայ ստացողներին ստորագրութիւնը:

Երրորդութիւն ս. Հայերն այդ մատեանն ունեցել են իրենց ձեռքին. պէտք էր, որ նրանք մի փոքր միայն սառնասիրտ լինէին և այն թերթերու բարեացակամութիւնն ունենային:

Բ. № 2, 117, 120 և 142 օրգերներին կցած 9, 263, 266 և 322 յօդուածներում յիշատակուած է, որ ձեմարանին միս մատակարարող մսագործ Կարապետ Այվազեանին զանազան ժամանակներում տրուել է տարբեր քանակութեամբ զրամ, որի համար և առած ստացականները Կարապետ Այվազեանի անգրագիտութեան պատճառով ստորագրել է նրա եղբայրորդի Լեւոն Այվազեանը, մատակարարած ամբողջ միս հաշիւը տեսնելուց յետոյ:

Ուրեմն:

Այդ երեւոյթին եթէ կեղծիք անունը չտանք, իսոմ իրաւունք ունինք ասելու, որ վեցաչեայ յանձնաժողովը փոքրիկ թիւրատեսութիւն մ'է ունեցեր...

Գ. № 2 օրգերին կցած 12-րդ յօդուածը իւր ձեռքով գրել է մի ոմն Լեւոն Գեօղալեան, որ իր երկու ընկերների հետ խոտհարքի տեղից խոտ է բերել ձեմարան, 10 ո. 90 կ. քրէ՛ է ստացել և ընկերների ու իւր փոխարէն ստորագրութիւն տուել:

№ 100 օրգերի 217-րդ յօդուածը Երևանի վաճառականներ Գ. Ամիրեանի և Բ. Եղիազարեանի առևտրական տան օրինական հաշիւն (счета) է, մի փոքր ձմառուած, բայց զրամ ու ստորագրած ինչպէս հարկն է:

№ 142 օրգերի 323 յօդուած 200 ո. ստացականն

է, որ տուել Վաղարշապատցի կրպակատէր «քուրդ» Յովսէփ Գէորգեանը՝ իւր իսկական ստորագրութեամբ:

Այս բոլորից հետեցնելու է, որ դուք, ճշմարտութեան Աւետարանի քարոզներդ, աշխատանքնիդ պէտք է սկսած լինիր կրքից խոնջացած ուղեղով, թէ չէ անհարկին բան է, որ «ամենայն անաչառութեամբ ու աչալըջութեամբ» գործող նորմալ ուղեղն այդ աստիճան խեղճ ու սնանկ արդիւնք ցոյց տար...

Դ. № № 16, 30 և 45 օրգերներին վերաբերեալ 70, 89 և 125 յօդուածներում յիշուած է, թէ վերադիր վճարով զանազան ժամանակներում ձեմարան է ուղարկուել 13 ո., 6 ո. 80 կ. և 10 ո. 75 կ. զրքեր, որ ստացել ու զրամատեան է մացրել ձեմարանի մատենադարապետ պ. Ա. Մնացականեանը և ստորագրել:—Հետեալբար, մեզ մնում է ձեր «անաչառութեան» նկատմամբ բացէ ի բաց կասկած յայտնել ու շարունակել:

Ե. № № 2, 43, 51, 76, 93, 95, 100, 116, 131, 139, 140, 149, օրգերների 13, 121-122, 124, 131, 176, 178-179, 184, 204, 207, 218, 260, 293, 307, 314 և 331 յօդուածներում արձանագրուել են ամբողջ տարուայ ընթացքում ձեմարանի տնտեսի, կամ ձեմարանի գործերով նրա բացակայութեան միջոցին նրան փոխարինող վերակացու պ. Ա. Մնացականեանի ձեռքով եղած բացարձակապէս մանր ծախքերը, ինչպէս օրինակ.

Աշակերտների համար ներքնարկներ կարելու մի քանի մեծ ասեղ, երկու պարկ ձեմած կաւճի քրէ՛, խոհանոցի համար 41 կ. թթու խնձոր, 30 կ. քացախ, մի հատ կողպէք, երկու թի, փռուի համար 2 հատ կուժ, 1-2 զիւժին կոճակ, 12 կ. թիւ ու մեխ, հիւանդանոցի համար 30 կ. սաւորն, 20 կ. սուխարի, երկու

հատ ֆրանշով՝ (բուլկի), ծանր հիւանդութիւնից ապա-
քինուած մէկ աշակերտի համար մի շիշ կոնեակ, սար-
գին, մի քանի հատ լիմոն, կամպոտ պատրաստելու
11/2 լիտր խնձոր, աշակերտների ֆլէյտաների համար
45 կ. իւղ, կնիքների համար 30 կ. ներկ, հիւանդա-
նոցի համար պատահական գիւղացիներից զանազան
ժամանակներում գնուած 10—30 կ. ձու, մի քանի
զոյգ գուլբայ, բրինձ խստակող կանանց մի օրավարձ
90 կ. կարկատան անող երկու կնոջ վարձ 60 կ. և սրանց
նման կոպէկանոց ուրիշ ծախքեր:

Այդ յօդուածներէ մէջ են մտնում անվստահու-
թեան տեղիք տուող և այն ծախքերը, որ կապուած
են ձեմարանի գործերով տնտեսի տարուայ մէջ 3-4
անգամ Երեան գնալու և այնտեղ մնալու մի քանի
օրուայ ապրուստի հետ:

Չգիտենք, այստեղ ինչն է մտատանջութիւն պատ-
ճառում «ձեմարանի բարդաւածման նախանձախնդիր»
ձեմարանական սրբակնցալ հայրերին. միթէ այն,
որ տնտեսը Երեանում երեք օր այս ու այն վաճառա-
կանին աղաչելուց յետոյ՝ կարողանում է վերջապէս
ապառիկ հաշուով անհրաժեշտ միջեր ու պիտոյքներ
ստանալ և վարչութեան երկու ուրբու սննդահաշիւ
ներկայացնել: Քաղաք տեղում երեք օրուայ համար
երկու ուրբի ապրուստի փող: Շատ է, անհաւատալի
է:—Անհաւատալի է միթէ և այն, որ ընտանեկան ինչ
ինչ հանգամանքներից յուսահատ՝ անտառում ինքնա-
սպանութեան փորձ անող մի սանի իւր մտադրու-
թիւնից յետ կանգնեցնելու համար հերթապահ վերա-
կացուն իրաւունք է համարել 50 կոպէկով կառք նըս-
տել և շտապել դէպքի տեղը: Ի՞նչպէս կը հրամայէիք
զուք, ճշմարտութեան կշտարար քննիչ հայրեր: Վերա-
կացուն պարտաւոր էր կատարանից 50 կ. ընկալա-
գիր ստանար և վարչութեան ներկայացնէր, հա:

Ո՛չ. եթէ ձեմարանի տեսուչն առանց մի հատիկ
փաստի՝ վստահ է իւր պաշտօնեաների հաւատար-
մութեան, նա պէտք է արձակէ նրանց ու նոր մար-
դիկ հրաւիրէ. և որովհետեւ այդ դէպքում ևս յիշեալ
տեսակի ծախքեր անխուսափելի են ու ամեն հաստա-
տութեան մէջ ընդունուած, ուստի ձեմարանի տեսուչը,
որպէսզի ձեր տրամադրութեամբ վարուած լինի,
պէտք է թուղթն ու գրիչը ձեռին՝ ինքն անձամբ
ամեն բան գնէ և, օրինակ, խոհանոցի պղինձները
սպիտակեցնելու համար մի ինչ որ մաշաղիից գնած
կլայեկի 1 ու 15 կ. հաշիւ ներկայացնէ հետեւալ մա-
կագրութեամբ. «վասն անգրագիտութեան և խնդրա-
նօք մաշաղի Զարար Միրզա օղլու գրեցի և ստորա-
գրեցի նաշաղիրավաճառ Թաթոս Շառլեան»...

Հիանալի է. տեսուչն իսկապէս իւր գերի մէջ
կըլինէր...

2. № № 5, 33, 57, 68 և 116
29 94 34 153 259

հաշիւների նկատմամբ յանձնաժողովն ամենայն
իրաւամբ մակարայել է, որ պակասաւոր են: Ձեմա-
րանը իւր հացթուխին փող տալուց յետոյ պէտք է
պատշաճաւոր ստացական առնէր: Սակայն, ինչպէս
երեւում է, այդ տեղի չի ունեցել այն պատճառով, որ
փող ստացողը կ. Արամեանը հաշիւները դեռ բոլորո-
վին չմաքրած անսկնկալ հիւանդանում և մեռնում է: *)
—Նոյնն ասելու է և Երեանի զրավաճառներից 7 ուրբու
զրքեր, 8 ու. նօտաներ բերել տալու համար. թէև
չպէտք է մոռանալ, որ այդ առևտուրը յոնձնարարա-
կան նամակով արել է ձեմարանի ծառան և գները

*) Աւելորդ չենք համարում յիշատակել, որ այդ հաշիւները
մնացել են նախորդ վարչութիւնից: 2. Հացթուխի այդ հաշիւները
փակել են նրա ժառանգները:

կանխիկ վճարելով՝ չի մտածել հաշիւ անելու մասին:—Այդպիսի թերութիւն ունի և այն փաստաթուղթը, որ տնտեսը ներկայացրել է ստանալու թիֆլիզում կօշկովաձառ Արտիկանից ձեմարանի Ա. լսարանի ուսանող Ս. Նամար գնած կօշկի ու կրկնակօշկի արժէքը: Երևի խրախուսուած այս փաստերից՝ ձեր հոանդուն շահատակութիւնն այնքան առաջ էր տարել, որ հանձարեղ երևակայութեան մի անըմբռնելի թռիչքով ստեղծել էր «կէս մահուղի» նշանաւոր արտադրութիւնը, ձեր սիրալի քննութեան այդ զլուխ գործոց նշանաւոր է. «ձեմարանի ելեմտից հաշիւները ամենայն ահաջատութեամբ, աշարժութեամբ և կարող ընդունակութեամբ» քննելուց յետոյ՝ դուք ձեր եզրակացութեան գոհարներն արձանագրում էք այսպէս.

«Յօդուած 9/52—53 կէս մահուղի արշինը հաշուած է 6 ս. 60 կ. և 6 ս. 50 կ., որպիսի արժողութեամբ ոչ թէ կէս մահուղ, այլ և իսկական մահուղ չէր կարող գործածուել ձեմարանի աշակերտների համար»:

Ուրեմն:

Էլ ի՞նչ ուրեմն. կատարուել է մի կեղծիք, մի խոշոր գողութիւն, որի տխուր հերոսներն են ձեմարանի վարչութեան անդամները...

Այո, այդպէս կատէինք և մենք, եթէ մեր հակառակորդին անուանարկելու մոլի կիրքը, մարդկային արժանապատուութիւնը նուազագոյնով ստոր կիրքը մեզ ևս կուրացնէր մինչ այն աստիճան, որ չեղած նկատէինք խոշոր խոշոր տառերով տպած հետեւեալ «счётъ»-ները և «полусопожки»-ն «полусукно» կարդայինք: Ընթերցողների տարակուսանքը փարատելու և քննիչ վարդապետների աղաղակող ապաշնորհութիւնը ցոյց տալու համար մենք մէջ կը բերենք այդ հաշիւներն իրենց տառացի մանրամասնութեամբ:

Г. Тифлисе 28 Августа 1907 г.

СПЕЦИАЛЬНЫЙ МАГАЗИНЪ ОБУВИ

С. Петербургской Варшавской и Заграничной

Большой выборъ резиновыхъ галошъ

Русско-Американской резиновой мануфактуры

А. С. ГИРГИДОВА

Въ Тифлисе

Фирма существуетъ съ 1875 года

На Дворцовой улицѣ въ домѣ Цовьяновыхъ № 8.

Счетъ Господину А. Мнацаканянцу

Мѣс.	Число	количеств.	Продано и отпущено Вамъ	Сортъ	Цѣна		Сумма	
					Р.	К.	Р.	К.
		31.	Цѣльн. мужск. полусоп. фабр.	348	6	60	204	60
			Итого			Р.	204	60
			По сему счету получилъ сполна					
			За Гиргидова Н. А.					

СЧЕТЪ

ИЗЪ МАГАЗИНА

Варшавской, Петербургской и Заграничной обуви

М. А. Теръ-Антонянца

Въ Тифлисъ, На Эриванской площ.

Въ Городскомъ домѣ.

Господину Аракелу Мнацаканянцу

мѣс. чис.			Цѣна		Сумма	
			Р.	К.	Р.	К.
28 августа 1907 г.	24	Мужские цѣльные полу м.	6	50	156	
		По сему счету денги получено				
		сполно				
		Ստորագրած է М. Теръ-Ан- тонянцъ				

Երևի Գիրգիդովն ու Տէր-Անտոնեանցը կունենան այս հաշիւների պատճէնները, այնպէս որ հետաքրքրւողները կարող են անձամբ ստուգել և ի դէպ՝ մեզ հաղորդել, որ այդ պարոնները արդէն վերջ են տուել կօշիկ և կաշւի իրենց առևտրին ու այժմ մահուդի և բրդեղէնի գործ են սկսել... Այդ, իհարկէ, միջանկեալ հիմա ասէք, խնդրեմ, ընդունակութեան այդչափ արգահատելի սնանկութիւն ցոյց տալուց յետոյ՝ հապա մարդ որքան պէտք է կոկուած լինի, որ լարախաղացի պէս հրապարակ նետուի և ներբող, գովեստ կարգայ իրեն, թէ ինքը «կարող ընդունակութեամբ» է կատարել իւր քննութիւնը:

Արդեօք այդ կծու ծաղր, դառն հեգնանք չէ՞ ս. Սինոդին, այն հաստատութեան, որից իրաւատրուած են «աշաւուրջ» բէվիդորները... Սակայն ի՞նչ ենք կորցրել, ի՞նչ ենք փնտրում:

Եթէ էջմիածինը յիրաւի գիտակից լինէր իւր ու ամբիջապէս իւր հետ կապուած հաստատութիւնների վիճակին և նախանձախնդիր զրանց ողորմելի զրու-թեան բարւորման, մի՞թէ նրա մեխանիզմն այսօր այն աստիճան քայքայուած պիտի լինէր, որ զանազան բախտախնդիր անհատներ՝ թերուս վարպետների յաւակնութեամբ՝ համարձակուէին իրենց ձեռք առնել այդ մեքենայի լարումը, ջատագովէին իրենց լաթ ու նակութիւնները, յանդգնէին անմաքուր շրթունքներով ցեխ շալտել սրա նրա երեսին, և չզանուէր մէկը, որ քաշէր հրասանակը ու վայելչութեան, պատշաճաւորութեան սահմաններում պահէր նրանց... Եթէ էջմիածինը զլուխ ունենար, մի՞թէ Բենիկի պէս մարդիկ պիտի նշանակուէին յաջորդական, առաջնորդական հաշիւների քննիչ, որ գրելու, մերկացնելու լուրջ ոչինչ չգտնելով, պէտք է անպատճառ «փոքու» անհն, փոշի

բարձրացնեն և ամբողջ կոկորդով աղաղակեն. «Որովհետեւ №№ 6/41, 100/216, 111/229 յօդուածներէց մի երկուսը քիմիական մատիտով են ստորագրած, ուրեմն տընտեսական կառավարութիւնը տարւում է առանց հաշւի ու հասկացողութեան և պատիւ չի բերում պատասխանատու անձնաւորութիւններին»...

Շատ լաւ, բնորոշ ենք թէ, ձեր բերանով խօսում է նոյն ինքն ճշմարտութիւնը. բայց մի թէ մարդ պէտք է շիտակութիւնից այդչափ դուրկ, նեղսիրտ լինի, որ №№ 2, 5 և 6 օրգերների վրայ դրամ ստացողի ստորագրութիւնը չեղած յայտարարի լոկ այն պատճառով, որ շտապ ձեռքով է գրած այն:—Կամ մի թէ մարդ այն աստիճան պէտք է կորցնի գիտակցութիւնը, հասուն անհատի կորրեկտութիւնը, որ դժուարանայ ըմբռնել խիստ սովորական մի իրողութիւն և ամենամեղ զէպքը մատի փաթաթան դարձրած՝ անվտանգութեան բացորոշ ակնարկներ անէ մի այնպիսի պաշտօնեայի հասցէին, որի համար չափազանց մեծարժէք, նուիրական են վանքն ու ձեմարանը, այդ հաստատութիւնների բարգաւաճումը: Անվտանգութեան կասկած յայտնել մի անկաշառ, անձնուէր ծառայողի, որ ամբողջ ութ տարի անդուլ հոանդով աշխատել է յանուն ձեմարանի ու վանքի շահերի, — աւելի քան անբարեխղճութիւն է: Եթէ էջմիածնի պարիսպների մէջ կարելի է մատնանիշ անել հաւատարիմ, անշահասէր պաշտօնեաների, ձեմարանի անտես զոյր Մեսրոպը Արովեանն իրաւամբ առաջին քուէն պիտ ստանայ:

Պարզ խօսենք.

ձեմարանի տնտեսը ձեզ բացատրում է ջրհան մեքենայի մի ամսուայ ընթացքում (փետր. 8-ից մարտի 8) երկու անգամ փոքրացելու միջադէպը. նրա բացատրութիւնից պարզում է, որ Երևանից 15 ու. բերել

տուած մեքենայի անհրաժեշտ մասը «կարօ բիճա» յորջորջող ծառան տանում է մեքենայի մօտ, որպէսզի վարպետը գայ և նորոգի: Զրհօրը տանող սանդուխտներից իջնելիս՝ ձերուկ սպասաւորի ոտը սոթ է տալիս, ընկնում է և կոտրում ձեռքի իրը: Ստիպուած այդ կտորը նորից են բերել տալիս, բնականաբար 15 ու. նորից են ծախսում:

Այս պատմութեան մանրամասնութիւններն իմացել էք դուք. ուրեմն ի՞նչը պիտի հարկադրէր ձեզ անտես առնել այդ և յիշեալ անմեղ զէպքն արձանագրել իբրև մեղադրական կէտ: Անշուշտ այն չար մտահալումը, որով վարակուած, դուք չէք ճնշում ցեխ թըքնելու նաև նրանց վրայ, որոնք իրենց պաշտօնով մօտ են կանգնած պ. Բերբերեանին, ձեզ համար անտանելի և ձեր ատամին անհասանելի անձնաւորութեանը... Հակառակ զէպքում անհասկանալի է ձեր սրամտութեան միւս սխրագործութիւնը.

«Էջմիածին» կայարանից նոյեմբեր ամսին ձեմարան է բերուել 84 պուզ ապրանք, պուզը 7 կոպ. գումարն է 5 ու. 88 կոպ. (յօդուած 111/232):—Նոյն տեղից գեկտեմբերին, ուրեմն ձանապարհների ու երթեւեկութեան համեմատաբար աւելի դժուարին միջոցին, բերուել է երկրորդ անգամ ոչ թէ 78 պուզ, ինչպէս կեղծել էք դուք, այլ 153 պ. և իւրաքանչիւր պուզին քրէ՛ է տրուել 9 կ., գումարը 13 ու. 77 կ. (յօդ. 111/234): Արդ, գնելի ի՞նչ առանձին «անհամաչափութիւն», գործնականին հակառակ անհնարաւորութիւն կայ, որ դուք այդ հրապարակ էք հանում, այն էլ այն զէպքում, երբ ձեռքի տակ ունիք ապրանք բերող և փողն ստացող գիւղացու. պարտ ու պատշաճ սպասարկութիւնը: Հապա չարամտութիւն, ձեզ միայն տանող սպասարկողից չէ՞ այդ:



Մտքեր պղտորելու, կրքեր յուզելու անձնական թշնամանքի հետևանք չէ միթէ այն, որ դուք տարակուսելի էք համարում Պօղոս ծառայ Գէորգեանի ինն ամսուայ յաւելեալ ոռճիկի (36 ո.) միանուագ բաշխումը: Ձեզ աւելի, քան զուցէ ուրիշ ոչ ոքի, յայտնի է վանքի, մասնաւորապէս ձեմարանի նիւթական կրիզիսը, երբ ամենաանհրաժեշտ պէտքերի համար շատ անգամ ստիպողական կարիք է լինում մինչև իսկ 5—10 ո. մասնաւոր պարտք վերցնելու... Ուրեմն ի՞նչ անհաւատալի բան է, որ վարչութիւնը օգտուէր փողի առձեռն կարիք չունեցող ձեմարանի իւր սպասաւորի ոռճիկից և յետոյ հնարաւորութեան դէպքում մի քանի ամսականը միանուագ վճարէր (յօդ. 9/48):

Նոյն այդ բացասական զգացմունքով էք ղեկավարուել դուք նաև միեւնոյն գումարը թիւրիմացութեամբ երկու տեղ գրուած լինելու նկատմամբ: Տընտեսը բացատրել է ձեզ դէպքի եղելութիւնը, որից պարզուում է հետեւեալը.

Նա ձեմարանի տնտեսական գործերով Ախալքալաքում է լինում, երբ լսում է Ամենայն Հայոց Հայրապետի մահը: Այստեղից նա դառնում է Թիֆլիզ, ուր վարչութիւնից հեռագիր է ստանում, թէ շտապիր ձեմարան, քո ներկայութիւնն այս օրերս անհրաժեշտ է. գնած ապրանքների փողի մասին և ոչ մի խօսք: Թիֆլիզից նա հեռագրով փող է պահանջում, որովհետև եղբ. Սէյլանեանները չեն ուզում առանց կանխիկ վճարի 1000 ո. արժողութեամբ իրենց ապրանքը բաց թողնել: Շատ հասկանալի պատճառով ձեմարանը չի կարողանում հարկաւոր եղած գումարն անմիջապէս փոխադրել. այն ժամանակ տնտեսը վերցնելով իւր քնկերներից մէկին, Պ. Ա. Արիստակէսեանին՝ գնում է Սէյլանեանների մօտ և ասում.—խիստ անհրաժեշտ է,

որ ձեզնից վերցրած խոհանոցի մթերքն օր առաջ տեղ հասնի. ուստի խնդրում եմ հենց այսօր—շաբաթ ձանապարհէք. փողը կըստանաք այս պարոնից կամ վաղը, կամ միւս օրը: Ուղէտղի դուք վստահ լինիք, ես կարգադրել եմ, որ ուրիշ տեղերից իմ առած ապրանքներն էլ ուղարկեն ձեզ, և դուք ձերի հետ միասին յանձնէք երկաթուղուն, միայն առանց վերադիր վճարի. ձեզ միանգամայն միամտացնելու համար ձեզ մօտ եմ թողնում ուրիշ խանութներից վերցրած ապրանքների հաշիւները, որ ձեր դուրիկատների հետ միատեղ կը յանձնէք այս պարոնին, երբ սրանից կըստանաք ձեզ հասանելիք փողը: Այստեղ նա ի թիւս այլ հաշիւների Սէյլանեաններին է տալիս Տօլլէից կանխիկ վճարով վերցրած սապոնի 163 ո. 87 կ. օրինական ԿԿԵԴԵ-ը:

Նոյեմբեր 4-ի երեկոյեան նա ստանում է փողի փոխադրման հեռագիրը. այդ ժամանակ փոստը փակ է լինում, ուստի հեռագիրը յանձնում է յիշեալ պարոնին և հարկաւոր կարգադրութիւնն անելով՝ դիշերուայ գնացքով ձանապարհուում է դէպի Էջմիածին: Երկուշաբթի Արիստակէսեանը Սէյլանեանների ներկայացրած հաշուով փողը տալիս է նրանց և դուրիկատներն առնում, ուղարկում է ձեմարան: Բանից դուրս է գալիս, որ եղբ. Սէյլանեանները ցուցակազրելով իրենց բաց թողած ապրանքներն ու նրանց արժէքը, «ի հաշիւ Տօլլէ» (По счету Толле) մտցնում են 163 ո, 87 կ. և ստանում Արիստակէսեանից: Եթէ այդ բանը հաշուգրի անփութութեան հետևանք, անմեղ սխալ չէ, ուրեմն բացարձակ խարդախութիւն է: Այսպէս թէ այնպէս՝ ձեմարանը միեւնոյն սապոնի համար կրկնակի է վճարում, և բնականաբար այդ գումարը փաստաթղթերի մէջ էլ երկու անգամ է արձանագրուում:—Վարչութիւնն այդ առթիւ բանակցութիւններ է սկսել թէ

Տօլլէի և թէ եղբ. Սէյլանեանների հետ, ու յոյս կայ՝ յիշեալ գումարը շուտով յետ ստանալու:

Արդ, եթէ գուք չարամտութիւն չէք ունեցել անուանարկելու, վարկաբեկ անելու ճեմարանի վարչութիւնը, հապա ինչո՞ւ ոչ միայն զլացել էք մի երկու խօսքով փարատել կասկածների տեղիք տուող թիւրիմացութիւնը, այլ և տնտեսի բացատրութիւնից հրապարակ էք հանել միայն այն, որ իրողութեան անտեղեակ ընթերցողին կարող է տրամադրել յօգուտ ձեր միտումաւոր ակնարկներին:

Յաւալի է, աւելի ևս ցաւալի այն պատճառով, որ դուք—երիտասարդ վարդապետներդ այդպիսով ճեմարանի դէմ էք լարում միաբանների առանց այն էլ կաղմ, պատրաստ բանակը, սովամահ անելու ձեզ երկար տարիների ընթացքում ծնողական հոգատարութեամբ սնուցող հաստատութիւնը... Այն էլ—յանուն վիրաւորուած դձուճ եսասիրութեան:

Ձեզ ատելի անձնաւորութեան հաշիւների մէջ ըստ կարելոյն շատ թիրութիւններ ցոյց տալու կրքի արբեցումն այնպէս է միզապատում ձեր մտածողութիւնը, իրերն ըստ հանգամանքների կշռադատելու ձեր «կարող ընդունակութիւնը», որ անձանաչելի էք դառնում:

Դուք զարմանում, ապօրինութիւն էք համարում այն, որ ճեմարանի վարչութիւնը վառելափայտի համար նախահաշուով որոշուած 1700 ու. 444 ու. բարձրացրել, 2144 ուրբու է հասցրել. բայց կամովին մոռացութեան էք տալիս մի շարք հանգամանքներ.

Ա. Եթէ ճեմարանը փող ունենար, վառելափայտը կը գնէր իւր ժամանակին, այն էլ սաժէնը ոչ թէ 28—29 ու. այլ 25—26 ու. հետեապէս եթէ ամեն մի սաժէնին միջին թուով 3 ու. պակաս հաշուենք, 43 սաժ. մէջ նրա զբաւարկողում կը մնար 129 ուրբի:

Բ. Եթէ ճեմարանը հնարաւորութիւն ունենար վառելափայտը իւր ժամանակին գնելու, և ոչ թէ անձրեախառն ձիւնը դնելուց յետոյ, երբ երթեկութիւնն աւելի դժուարանում է, և փոխադրութեան վճարը քարձրանում, —«Էջմիածին» կայարանից փայտի սաժէնը ճեմարան կը բերէին ոչ թէ տասն և մէկ ուրբու, այլ 8—9 ու. բնականաբար մօտ 90 ու. էլ այստեղ չէր կորչի:

Գ. Եթէ ճեմարանը միջոց ունենար վառելափայտը ժամանակին գնելու, և ոչ թէ այն միջոցին, երբ հղանակների փոխուելով միանգամայն փչանում ու անանցանելի է դառնում «Էջմիածին» կայարանի մօտ եղած ճահճի միջով անցնող շօսէն,—նա ստիպուած չէր լինի 41 ու. ծախսել միայն նրա համար, որ երկաթուղու տեղական վարչութիւնը рабочий поѣзд-ով 3 վազոն փայտը 2 վերստ տարածութեամբ նորից յետ դարձնէր և ճահճից անցկացնելով՝ թափէր դաշտի մէջ:

Ինչպէս տեսնում ենք, ճեմարանի վրայ վառելափայտը 260 ու. թանգ է նստում միայն այն պատճառով, որ նա փող չի ունենում այդ անհրաժեշտ պիտոյքը իւր ժամանակին առնելու:

Յետոյ, միթէ հաշւի չպէտք է առնել նաև այն, որ յանկարծական ձմեռն ստիպեց ինչպէս ամենքին, նոյնպէս և ճեմարանի վարչութեան 1, եթէ կուզէք դեռ 1¹/₂ ամիս սովորականից վաղ փակել դուռ ու պատուհանները և բորբոքել կրակարանները: Աւելորդ չենք համարում յիշատակել, որ անցեալ տարի միաբանութիւնը ճեմարանից էր ճաշ ստանում, իսկ այդ բանն էլ իւր կողմից էր ազդում ցախի վրայ այն տեսակետից, որ օջախի երկու աչքն էր վառուում:

Ապրելով Էջմիածնում, ճեմարանին այդքան մօտիկ, վերաբնիշ վարդապետները չէին կարող ոչինչ

չիմանալ այս հանգամանքները մասին, մանաւանդ որ իբրեւ շահագրգռուած անձնաւորութիւններ՝ նրանք անհնարին է որ հանդուրժէին և չհետաքրքրուէին ձեւաբանի առոնին կեանքով... իսկ այդ բանը, յարաբերութիւնների բարոյական ըմբռնումի տեսակէտից, աւելի ևս ծանրացնում է ձեր յանցանքը:

Դուք, քննիչ սուրբ հայրեր, կոչումով խոստովանեցնող էք, բայց ազնիւ եղէք այս մի դէպքում անկեղծութեամբ խոստովանելու. միթէ դուք ծանօթ չէք ձեւարանի էլէքտրական լուսաւորութեան նկատմամբ Մայր Աթոռի վարչութեան ցոյց տուած ամօթալի վերաբերմունքին, որ խղճերնիդ սպանելով՝ չըմեղ էք ձեւանում և աղաւնու միամտութեամբ յայտարարում.

«Ըստ նախահաշույ լուսաւորութեան և պարագայը նշանակուած է 100 ո. մինչդեռ ծախսուած է 390 ո. 32 կոպէկ»:

Պէտք է զիտենալ, որ ոչ մի հաստատութիւն գործնականի մէջ դերի չի դառնում իրեն յատկացրած դրամազլխի այն մասնակի բաշխման, կիրառութեան, ինչ որոշուած է նախահաշուով. էականն այն է, որ նախատեսուած գումարից աւելի չծախսուի. իսկ եթէ կարիք զգացուի X-ից մի բան առնել C-ին տալ, C-ից կտրել Z-ի վրայ դնել,—այդ արդէն երկրորդական է, և դրա դէմ առարկելն անմտութիւն:—Այդ ընդհանուր օրէնքի ճշմարտութիւնը դուք էլ անշուշտ ընդունում էք, սակայն ընդունելով հանդերձ ոչ մի խօսք չէք ասում ձեզ յայտնի այն պատճառների մասին, որ ստիպել են ձեւարանի վարչութեան՝ եռակի ծախք անել ելէկ. լուսաւորութեան համար: Կարծես բնաւ չէք իմացել, թէ ինչպէս մեծ մեքենայի կոտրուելուց յետոյ վանական կառավարութիւնը պաշտօնական թղթով յայտնել է ձեւարանի վարչութեան, որ սա սովորա-

կան լամպաների պատրաստութիւն տեսնէ, որովհետեւ փետրուարի մէկից էլէկ. լոյս չի լինելու,—թէ ինչպէս վարչութիւնը մի քանի անգամ դիմել է ում հարկն է և խնդրել, որ փոքր մեքենան բանեցնեն, իսկ սրանք, որպէս զի միանգամ ընդմիշտ վերջ տուած լինեն հանգուցեալ նահապետ եպիսկոպոսի նախաձեռնութեամբ սկսուած գործին, զանազան պատճառարանութիւններով՝ գլուխ դէմ չեն տուել սկզբում. վերջը, տեսնելով որ իրենց բոլոր առարկութիւնները ջրուած են, ճարահատ ասել են. «վարպետը գործին հմուտ չէ, մեքենան կը փչացնի. սակայն արիւն ձեր ի գլուխ ձեր. փոքր մեքենան կըտանք ձեզ, միայն գիտցէք, որ վաճառք ոչ մի կոպէկ իւր վրայ չի առնի... Նրանք մտածում են ծախքերը ձեւարանի վրայ թողնելով՝ խնդիրն ըստ ինքեան մեղցնել. սակայն ինչպէս երևում է, սխալ հաշիւ էին անում. վարչութիւնը լաւ գիտէր որ ինչ լամպաներին վերակենդանութիւն տալն իրեն կընստէր մինչև 170 ո. մի այդքան էլ նաւթի ու ծառայի փող. դրա վրայ աւելցրած նաև միւսից սեպտած առաստաղները սպիտակացնելու ծախքը, և կատացուի մի պուամար, որով հնարաւոր է մաքուր էլէկ. լոյս ունենալ: Ուստի փետրուար ամսից ձեւարանը թէ մեքենավարին ոռճիկ տալով և թէ անհրաժեշտ ծախքերը հոգաւով՝ փոքր մեքենան անսայթաք բանեցնում է մինչև մայիսի վերջը, ի նախատինս նենգամիտներին...

Ասացէք խնդրեմ, այս բոլորից յետոյ կարելի՞ է մեղադրել ձեւարանի վարչութիւնը, որ նա 100 ո. փութարկն ստիպուած է եղել 390 ո. ծախսել:

Ուղղամիտ ընթերցողի համակրութիւնը մեր կողմն ունենալով՝ մենք կասկեմ ո՛չ և կըշարունակենք:

Յանձնաժողովիդ, ըստ երևոյթին, առանձնապէս զայրացրել և տարակուսանքի պատճառ է եղել գոմի

սկզբնաւորման և պահպանութեան համար եղած ծախքը: Երևի հենց այդ է շարժառիթը, որ դուք այդ խնդիրը շօշափում էք խիստ հարեանցի, այն ևս այնպիսի սահիկ մի արտայայտութեամբ, որ ընթերցողն ակամայ պիտ ընդհանաչի: «վա, 2133 ու. 93 ծախք, առանց մի կողէկ մուտքի: այս հօ աշկարա թաւան է...

Այո, եթէ մեզալի միայն մի երեսը նայելու լինինք: Մեզ յանձնարարելով ճշմարտութեան նախանձախնդիր և հշ միակողմանի ընթերցողների ներողամտութեան, մենք այստեղ մի փոքր աւելի կանգ կառնենք և կուրուադձենք իրերի հարազատ պատկերը:

Դեռ 1906|07 ուս. տարուայ ընթացքում հանգուցեալ Հայրապետը մի կոնդակով հրամայում է ծախծխել վանքի անասունները և վերացնել ագարակը—պլանը: Իսկ վանական կառավարութիւնն այդ միջոցին ճեմարանի վարչութեան ուղղած իւր № 31 զրութեամբ կարգադրում է սպանդանոցի համար ագարակից ստանալ 66 հատ մեծ ու փոքր եղջիւրաւոր անասուն և արժէքը—1460 ու. տալ վանական կառավարութեան՝ ներկայացնելու Սինոդին: Այդպէս էլ լինում է: Եւ որովհետեւ մի օրում այդ բոլոր կենդանիները մորթելն անմիտ ու անհնարին բան էր, ուստի վարչութիւնն ստիպուած է լինում նրանց վրայ հսկող, խնամող իւր յատուկ ծառան ունենալ և խոտ ու յարդի համար էլ հարկաւոր դումարը բաց թողնել: Ուրեմն այսպէս բնական անհրաժեշտութեամբ սկիզբն են առնում ճեմարանի գոմի ու դրա հետ կապուած ծախքերը:—Վանքն ու Սինոդը այդ բանը չիմանալ չէին կարող, որովհետեւ ճեմարանը ամեն ամիս իւր ել ու մուտքի հաշուեկշիռը ներկայացրել է և, ինչպէս տեսանք, տակաւին շարունակում է ներկայացնել պատշաճաւոր իշխանութեան: Եթէ վանքը երկու տարուայ ընթացքում բացարձակ

լուծիւն է պահել այդ առթիւ, կընշանակէ իւր այդ վերաբերմունքով էլ սանկցիա է տուել սկսուած գործին: Իսկ ճեմարանի վարչութիւնն ու անտեսը տեսնելով՝ որ ճեմարանին յատկացրած անասուններից մնացուի յարմար կենդանիները մորթելուց յետոյ մնացած լաւ կովերից հնարաւոր է մի փոքրիկ տնտեսութիւն առաջ բերել, բարւոք են համարում «իրենից իրեն մատաղ» անելով՝ փորձել. ուրիշ խօսքով, իրենց յանձնուած 1460 ուրլու կենդանական դրամագլուխը շահեցնել:

Քննելով տնտեսի այդ առթիւ կազմած խիստ մանրամասն և օրինակելի հետեղականութեամբ տարած հաշիւները՝ մենք իմացանք.

1907 թ. փետր. 4-ից մինչև 1908 թ. սեպտեմբեր՝ ճեմարանի կովերը տուել են 885 պուդ, 33 ֆ. կաթ. պուդը 1 ու. 20 կ. (որ մեր կարծիքով շատ աժան է), դումարն է 1062 ու. 99 կոպէկ:

Պահանջի համար մորթուած անասունները տուել են.

Միս—187 պուդ. 17 ֆունտ.

Կաշի—24 » 14 »

Ճարպ—6 » 11½ »

Պաշ—33 հատ:

Այս բոլորն ընթացիկ գներով հաշուած են 885 ու. 91 կոպէկ:

Ծախուած է 4 եղ— 200 ու.

» » 3 արջառ— 103 ու.

Ընդհանուր դումարն է 2251 ու. 90 կ.

Ուրեմն մուտք է 2251 ու. 90 կ.:

1907 թ. փետր. 4-ից մինչև 1908 թ. Սեպտեմբեր՝ խոտի, յարդի և ծառայի տրուել է 1399 ու. 59 կոպէկ:

Ուրեմն ծախք է 1399 ու. 59 կոպէկ:

Ծախքը մուտքից դուրս գալով՝ ֆուտ է 862 ու 31 կոպէկ։—Բացի այդ, ձեմարանն այժմ ունի 40 դուլա անասուն. վերջիններս թէև այժմ անհամեմատ աւելի լաւ են և աւելի թանգ արժէն, քան արժէին վաղի օգարակում եղած ժամանակ, սակայն հաշուելով հէնց այն գնով, ինչ գնով ձեմարանն ստացել է վաղից, այսինքն 22 ուլուլի, կըստանանք 880 ուլուլի, որ մուտքի հետ կանէ 1742 ու 31 կոպէկ։ Սրանից հանելով 1460 ու մայր գումարը՝ դուտ արդիւնք ֆուտ է 282 ու 31 կոպէկ։

Ուրեմն բացի այն, որ ձեմարանի գոմը ձեմարանին և նրա հիւանդանոցին մատակարարել է Թարմ միս, կաթ, իւղ ու մածուն, յետէ ձգել նաև 282 ուլուլու մի, թէև փոքրիկ, բայց շահարկ գումար։ Հետևապէս եղև այդ բանը հրապարակ հանել և խնդրին այն տեսակ բնոյթ տալ, որ ձեմարանի վարիչներին համբաւը վանականների ու ընթերցողների աչքում բծաւոր ու կասկածելի երևայ, — առնուադն ամօթ և անպատուարեր է կոչումով սիրոյ ու խաղաղութեան աւետարանը քարոզող վարդապետների համար *)։

Քննիչ հայրերի պանծալի շահատակութիւնը եթէ միայն այդտեղ վերջանար, դեռ ոչինչ. սակայն նրանք աւելի առաջ են գնում, և գետնից քարշ եկող նրանց դրօշակի վրայ գրած է. «Սուտ ու կեղծիք՝ յանուն յաղթանակի»։ Նրանք ասում են. «տեսի ճանապարհածախքը (299 ու 95 կ.) մեծ մասամբ (ընդդժաժը մերն է) եղել է անձնական գործի պատճառով». և իբրև ամպոյց բերում են նրա հաստատուելու համար՝ Թիֆլիզ գնալը։

*) Կոկորդիլոսի արցունք թափող քննիչ վարդապետներն արդեօք կարո՞ղ են երաշխաւորել, որ տառնեակ հազարների արժող և իրենց ձեռքով կառավարող վանքի օգարակը գէթ այդքան արդիւնք է տալիս։

Քննելով այդ խնդրին վերաբերեալ փաստաթղթերը՝ երևաց հետեւալը.

1907 թ. օգոստոսին պ. Բերբերեանը հանգուցեալ Հայրապետի թոյլտուութեամբ գնում է Թիֆլիզ ուսուցիչներ վարձելու և այդ առթիւ ծախսում է 88 ուլուլի, ճանապարհածախս, մօտ երկու շաբաթուայ Ա-ի փող, անդադրամ, կառքի և հոսագրի (օրդ. № 23, յօդ. № 81)։

Նոյն թուի նոյեմբերին տ. Տեղապահի առաջարկութեամբ նա գնում է Թիֆլիզ ձեմարանի գոյութիւնը պահպանելու համար մուրացկանութիւն անելու և ծախսում է 34 ու 90 կ. (օրդ. № 63, յօդ. № 148)։

Ծննդեան տօներին, կրկին ամ. տ. Տեղակալի առաջարկութեամբ, նա ստիպուած նորից ուսն է ձրգում մուրացիկի պայուսակը ու Թիֆլիզը հերիք չը համարելով՝ անցնում է ոսկու քաղաքը — Բաղու և ծախսում է 67 ու 30 կ. (օրդ. № 119, յօդ. № 265)։— Ընդամենը 190 ու 20 կոպէկ, որը հանելով նրա ճանապարհածախքերի ընդհանուր գումարից — 299 ու 95 կ., կըմնայ 109 ու 75 կոպէկ. ուրեմն նա իւր հաստատուելու համար ծախսել է 109 ու 75 կ. (օրդ. №№ 1472 154, յօդ. №№ 327 և 354)։ Արդ, դժբաւասացէք, այստեղից կարելի՞ է միթէ մակարայի, որ տեսուչը ճանապարհածախքը մեծ մասամբ անձնական գործի պատճառով է կատարել։ «Ոչ»-ից բացի ուրիշ պատասխան չունի այդ հարցը, բնականաբար դուք սուտ էք գրել և կարմրելու փոխարէն դեռ կշտամբում էք...

Ինչ վերաբերում է այդ խնդրի իրաւաբանական կողմին՝ մեր կարծիքը հետեւեալն է.

Պ. Բերբերեանի հաստատութեան համար պէտք է մտածէր և հոգ տանէր նա, ով նրան տեսուչ էր

հրաւիրել. այդ կըլաջողէր նա լոկ խօսքերով, որն է անձի միջնորդութեամբ, թէ դրամական մեծ գոհարեւութեամբ, երկրորդական է և պ. Բերբերեանին շատ քիչ է վերաբերում: Հանգուցեալ Հայրապետի պաշտօնական հրաւերով նա էջմիածին է եկել իբրև ձեռնարանի տեսուչ, և այդ հրաւերը բաւական էր, որ նա իրաւական տեսակէտից ստանար իւր ոռճիկը թէկուզ այն դէպքում, եթէ կառավարութիւնը նրան չհաստատէր: Եթէ պ. Բերբերեանը մարտ ամսին տ. տեղապահի խորհրդով և առաջարկութեամբ Թիֆլիզ է գնացել ու աշխատել իւր հաստատութեան համար, այդ արել է ձեռնարանի շահերն ի նկատի ունենալով և ոչ թէ իւր քէֆի համար:— Յամենայն դէպս յիշեալ ծախքը անձնական, կամ ոչ անձնական համարելու վերաբերմամբ ցանկալի էր լսել իրաւարան մարդկանց կարծիքը. իոկ մինչ այդ, մենք չենք կարող մեր զարմանքը չյայտնել տ. տեղապահին և ս. Սինոդին, որոնք ամէն ամիս ստացել են ձեռնարանի մանրամասն հաշուկշիւրը, հետևապէս իմացել են այդ ծախքի մասին, բայց լուկ են: Ինչ որ է, զարմանալուց յետոյ մեզ մնում է միայն թիկնադրել և անցնել հետեւալ խնդրին:

Յանձնաժողովի սրտացաւ անդամները «մայր թոռի ներկայ տնտեսական տագնապի միջոցին անսպասակայարմար են համարում այն, որ ձեռնարանի պ. տեսուչը բացի իւր տեսչական 2500 ու. ստացել է ևս 900 ու. դասագին՝ հակառակ կանոնադրութեան և ի ֆլաս տեսչական պաշտօնի»:

Նախ, պէտք է այնքան ազնիւ լինէիք, որ չսրտէիք և 850 ու. դասագինը 900 ու. չբարձրացնէիք: Անշուշտ մենք այդ ընչին տարբերութեան վրայ ուշք չէինք դարձնի (ի՞նչ մեծ բան է 50 ու.), եթէ նպա-

տակ չունենայինք հասկացնել, նախազգուշացնել «չարմարդկանց», որ դուք «անաչառ» և «աշաւուրջ» քընսիչներդ այդ արել էք հէնց... այնպէս, բարի նպատակով... Հարկաւ նոյն այդ բարի նպատակով է, որ անսպասակայարմար էք համարում պ. տեսչին դասադին տալը. բայց մոռանում էք մի բան:

Պ. Բերբերեանին հրաւիրելիս նրան ասել են, որ նա օգնական չպիտի ունենայ, որովհետեւ վանքի սուղ միջոցները չեն ներում այդ. դասեր վերցնել կարող է և պէտք է անսպասուած վերցնի, որպէսզի հնարաւորութիւն ունենայ իմօտոյ ծանօթանալու իւր սաների մը տաւորին: Նա վերցնում է Զ-րդ և Ե-րդ դասարանների ուսուց և ընդհանուր պատմութեան վեց դասը այն հաշւով, որ պ. Յ. Յովհաննիսեանն էլ կըվերցնի լսարանի ուսուց գրականութեան և սիմֆոնիայի դասերը: Բայց պ. Յովհաննիսեանը պատճառ բերելով Սինոդի իւր ծառայութիւնը՝ կատեգորիկ հրաժարում է նոր դասեր առնելուց, և որովհետեւ 400 ու. անհնարին էր ուսագէտ նոր ուսուցիչ հրաւիրելը, ուստի պ. Բերբերեանն ստիպուած է լինում կանոնադրութեան հակառակ այդ տարին փոխանակ 6-ի՝ 8 դաս ունենալ:

Սակայն, որ այդքան դասեր վերցնելով հանդերձ՝ նա ուսումնական տարուայ ընթացքում նախադահել է 42 մանկավարժական ժողովի, դասարանները յաճախելով՝ պարբերաբար հետեւել է ուսուցիչների դասաւանդման անմիջապէս հսկել է տնտեսութեան, դպրոցական կարգապահութեան վրայ, ազատ ժամերին, ինչպէս ստոյգն իմացանք տղաներից, դասախօսութիւնների է արել զանազան նիւթերի մասին, ներկայ է եղել աշակերտական ազատ-գրական երեկոյթներին, ունեցել է մասնաւոր զրուցատրութիւններ լսարանցիների հետ, բացակայ ուսուցիչների փոխարէն աւելորդ դասեր է պարապել, կազմել, ղեկավարել և ան-

ձամբ մասնակցել է բազմաթիւ երեկոյթներէ, հանդէսներէ և ներկայացումներէ,—այդ փաստ է և փայլուն ապացոյց, որ տեսչի դասեր վերցնելն «ի վնաս իւր պաշտօնի չի եղել»:

Երբ պաշտօնեան բարեխիղճ է և գիտէ տնտեսել իւր ժամանակն ու օգտուել նրանից, ունի բոլորն եռանդ և գործելու տենչ, նա իւր պարտականութիւնները կրկատարի անթերի: Պ. Բերբերեանը ոչ միայն անթերի է կատարել իւր տեսչական և ուսուցչական պարտականութիւնները, այլ և չի խորշել իւր ազատ բոլշները նուիրելու Վաղարշապատի հասարակական գործերին:

«Մշակն արժանի է իր վարձին»։ Պ. Բերբերեանն ստացել է այն, ինչ պէտք է ստանար: Իսկ եթէ քննիչ վարդապետները այդքան նախանձախնդիր են «Մայր Երկրի տնտեսական տագնապի» բարեփոխման, թող յիստեն ուրիշ ամսականի տեղ ստանան երեսուն, նոյնն անել յորդորեն իրենց միաբանակից եղբայրներին և որ զլիսաւորն է, իրենք սովորեն ու միաժամանակ քարոզեն պաշտօնավարել մաքուր ձեռներով, որպէսզի Սինոդն ամբողջ տարին ընդ ստիպուած չլինի երեսի վրայ թողնել այժմէութիւն կազմող իւր հերթական գործերը և զբաղուել էջմիածնի կուսակրօն պաշտօնեաների մութ ու կեղտոտ զբամական հաշիւների ապարդիւն քննութեամբ...

Մաքուր հաշիւապահութիւն, շիտակ համարատուութիւն—անա ձեր նշանաբանը, որին պիտի հետևիք ամբողջ հոգով. իսկ մինչև այդ՝ անհատականապէս աշխատեցէք գտուել, մաքուր, ազնիւ մարդ դառնալ. մի անէք այնպիսի գործ, որ, ուրիշներին արատաւորելու փոխարէն, ինչպէս կը կամենայիք, վարկաբեկ է անում ձեզ և միայն ձեզ:

Օրինակ. ինչ աւելի հոսկանալի բան կայ, քան այն, որ միաբաններից ստացւած կերակրեղէնի և ցախի արժէքը՝ ապառիկների ու վերջնականապէս չփակուած հաշիւների պատճառով հնարաւոր չի եղել ժապաւինեալ մատեան մոցնել ամսէ ամիս, այլ տարուայ մէջ երկու նուագ միայն: Կամ, ինչո՞ւ էք ձեզ յանձնուած «ծառաների շտապը և նրանց ոռճիկացուցակը» չստացուած համարում լոկայն պատճառով, որ «զրանք ամսէ ամիս վաւերացրուած չեն տեսչի ստորագրութեամբ»։ Ինչո՞ւ էք տառակերութեան ետևից ընկել. միթէ չգիտէք, որ ձեմարանի տեսուչն առանց նախապէս ստուգելու օրդերին կցուած փաստաթղթերը, ոչ մի օրդեր չի ստորագրում, և հետևապէս այդ ստուգութիւնից յետոյ ստորագրած օրդերը, կամ նրան կցած փաստաթղթերը համարժէք են ու վաւերական ըստ ամենայնի:

Գիտէք, շատ լաւ գիտէք, սակայն սև օձը, ձեր սև կրծքի տակ բնած սև օձը հանգիստ չի տալիս ձեզ, և դուք ցաւի զօրից վազում էք դէպի բացարձակ անհեթեթութիւն:

Անհեթեթութիւն չէ՞ միթէ ձեր քննութեան ամբողջ պրոցեսն այն մեկին գիտակցութիւնից յետոյ, երբ դուք խոստովանել էք, որ Սինոդն իրաւունք չունի ռեվիզիայի ենթարկելու իրեն չենթարկուած հաստատութեան—ձեմարանի հաշիւները, այնուամենայնիւ առանց բողոքի, առանց ձեր արամադրութիւնն արտայայտող պաշտօնական որ և է թղթի, պարզ ու պլիկ գնացել, մտել էք ձեմարանի դիւանը և յանուն «օրէնքի ու օրինականութեան» (sic) պահանջել, որ ձեզ յանձնեն բոլոր մատեանները: Եւ երբ ձեմարանի տեսուչը ձեզ յիշեցնում է կանոնադրութիւնից ձեր իմացածը, թէ «Эчмиадзинская Арм. Дух. Академия на-

ходится подъ главнымъ начальствомъ Святѣйшаго Патріарха—Католикоса всѣхъ Армянъ, *) հետեապէս և պարտաւոր է հաշիւ տալ միմիայն ամենայն հայոց Հայրապետին, դուք փոխանակ այդ հիմնական օրէնքի անպայման հեղինակութիւնն ընդունելու և ձեր Հափազանց մեծ եւանդը մեղմելու, ընդհակառակը՝ հարաջրոցով լրագրական հրապարակն էք իջնում և ճեմարանի վարչութիւնը մեղադրում ձեզ ցոյց տուած անախորժութեան մէջ... Աշխարհի օրէնք է. մեղաւորի լեզուն միշտ աւելի երկար ու անսանձ է լինում...

Դուք համոզուած էք, որ ձեր միասիան ապօրինի է եղել, դուք համոզուած էք, որ ճեմարանի հաշիւները քննելով՝ ապօրինի գործ էք կատարել ճիշտ այնպէս, ինչպէս առանց Սինոդի եզրակացութեան և պատշաճաւոր թոյլտուութեան ապօրինաբար վերցրել ու հրատարակել էք ձեր քննութեան եզրակացութիւնը:

Աւելի չերկարացնենք, Sapienti sat.

Մենք օրիեքտիւ արձանագրեցինք այն, ինչ ցոյց տուեց մեր մանրադննին և, վստահում ենք ասել, անաչառ քննութիւնը: Կարծում ենք ընթերցողն այժմ արդէն հնարաւորութիւն ունի հանելու հարկաւոր եզրակացութիւնը: Իսկ ինչ վերաբերում է մեր կարծիքին, մենք կասենք,

Ապօրինի յանձնաժողովի ինքնագով անդամներն իրենց գործը կատարել են շահագրգռուած մարդու կրքոտ տրամադրութեամբ և վրդովեցուցիչ թշնամանքով: Ճեմարանի տեսչին և վարչութիւնը վարձարեկ անելու, անուանարկելու համար նրանք աշխատել են, ինչ գնով էլ լինի, անպատճառ պակասութիւն, թերոյթ, անկանոնութիւն և ղեղձում գտնել այդ հաստա-

*) Սրա բառացի թարգմանութիւնը կազմում է ճեմարանի «կանոնադրութեան» երկրորդ յօդուածը:

տութեան հաշիւների մէջ. ուստի չեն խորշիկ նոյնիսկ ակնյայտնի սուտ ու կեղծիք կատարելուց, չեն քաշուել դիտաւորեալ այնպիսի երկմիտ արտայայտութիւններից, որ կարող էին ընթերցողին մոլորեցնել և մտքերը պղտորել:

Զբաւականանալով միայն 07/08 ուս. տարուայ հաշիւները աչքի անցնելով՝ մենք այն համեմատեցինք անցեալ տարիների հաշիւների հետ և համոզուեցինք, որ ճեմարանը իւր գոյութեան օրից երբէք չի ունեցել այնպիսի կանոնաւոր հաշուապահութիւն, որպէս պ. Բերբերեանի օրով, որովհետև ճեմարանի ոչ մի տեսուչ այդ գործին վերաբերեալ այն համեմատական պատրաստութիւնն ու հմտութիւնը չի ունեցել, ինչպէս նա: Ճեմարանի հաշիւները տարուել են ըստ ամենախի բարեխղճաբար և օրինակելի հոգացողութեամբ. այնպէս որ ասել, թէ «այդ պատիւ չի բերում ճեմարանի ներկայ վարչութեան», — առնուազն անադնուութիւն և կուրուքութիւն է: Ճեմարանի հաշուապահութեան մէջ հազիւ նկատելի մի երկու աննշան խորդ ու բորտը, չնչին անհարթութիւնն անպայման պիտի վերագրել նրա տնտեսական խիստ աննախանձելի վիճակին: Երբ տասնեակ հազարների ծախս ունեցող մի հաստատութիւն երեսը կոկած մուրացկանութեամբ, հազար ու մի «մուշակի» հետ կապուած ողորմութեամբ է կառավարւում, և հետեապէս ոչ մի հնարաւորութիւն չունի ժամանակին փակել իւր հաշիւները, զարմանալի չէ անշուշտ, որ նրա հաշարարական հարմոնեան անաղարտ պահելու անդուլ ջանքերը խիստ հազազիւտ զէպքերում աւամայ երերէին: Անշուշտ, թէկուզ այդ իսկ պայմաններում, այնուամենայնիւ բոլորովին այլ բան կըստացէր, եթէ ճեմարանի հաշարարական բաժինն անջատուէր դիւանա-

կանից և տրուէր մի առանձին հաշւապահի *): Թէև այդ գէպերում ևս բացարձակ մտքով անթերիութիւն հնարաւոր չէ: Դժբախտաբար ճեմարանի նւթական միջոցները չեն ներում այդ անել, և քարտուղարը դիւանական բազմաթիւ ու բազմաբովանդակ գրութիւններից զատ՝ ստիպուած է հարիւրաւոր մանր մունր հաշիւներին, — այն էլ մեծ մասամբ ապառիկ հաշիւներին, — ամբողջ ծանրութիւնը իւր վրայ առնել և մինչև անգամ հինգ կողմէկանոց ժուտքն ու ելքը մի քանի տարրեր մատնաներում արձանագրել:

Այդ բանի համար հսկայական աշխատանքներով և ուշիմութիւն է պէտք: Ի պատիւ պ. Քոչարեանի, ճեմարանի քարտուղարի, պիտի ասենք, որ նա ամենայն պարտաճանաչութեամբ և բծախնդիր մանրակրկիտութեամբ կատարել է իւր գծուարին պարտականութիւնը, այն էլ, ինչպէս իմացանք, 60 ոտրլի ամսականով միայն... Այսպէս, թէ այնպէս, ճեմարանի ^{07/08} ուս. տարուայ հաշիւները վարչութեանն ոչ մի արատ չբերելուց զատ՝ ըստ ամենայնի օրինակելի կարող են լինել (հետո չգնանք) էջմիածնի համար, և Մայր Աթոռը իրաւամբ պիտի պարծենար, եթէ ընդհանուր առմամբ նրա վեղարաւոր պաշտօնեաներն այնպէս սրտացաւ վերաբերմունք ցոյց տային էջմիածնի շահերին և նախանձախնդիր լինէին նրա կողմէկներին, ինչպէս եղել են ճեմարանի անցեալ ուսումնական տարուայ վարիչները: Հետևապէս միանգամայն պարտաւելի է, որ վերստուգիչ յանձնաժողովի անդամները զօր են տուել իրենց ուղեղին, որպէսզի ճեմարանում

*) Ինչպէս յետոյ իմացանք, այդ բանի համար տեսուչը բացմիցս խնդրատու է եղել որպէս ճեմարանի իշխանութեան, լայց միշտ էլ մերժումն է տալիս:

ստայօդ գեղծումներ ու չեղած ապօրինութիւններ գտնեն, անուանարկեն և անվտանգի դարձնեն վարչութիւնն ու տեսչին և այդպիսով վերջիններիս գէմ լարեն հասարակական կարծիքն ու անգլուխ հոգեւոր իշխանութիւնը մինչ այն աստիճան, որ վերջինիս գէպի ճեմարանը ցոյց տուած անբարեացակամութիւնն ու անտարբերութիւնը փոխուի բացարձակ թշնամանքի և պատճառ դատնայ մեր միակ բարձրագոյն կըրթական հաստատութեան մէջ առաջ գալիք խիստ մեծ բարդութիւններին, եթէ ոչ փակման...

Ընթերցողների համար, կարծում ենք, այժմ պարզ է, որ ապօրինի քննիչ վարդապետների և նըրանց թե տուող թերթերի անվայել յարձակումները ճեմարանի արգի վարչութեան գէմ դատարկ զրախօսութիւն, կեղտոտ զրպարտութիւններ են: Հետաքըրքրականն այն է, որ այդ խստերախ շահատակութիւնների գործում մեր յեղափոխականները մտերմական դաշն են կապել օրսկուրանտ փարիսեցիների հետ... Եւ դեռ յաւակնութիւն ունին պնդելու, որ իրենք կղերական չեն:

Ո՞վ կը հաւատայ:

Իսկ ինչ վերաբերում է Բենիկների գրական ու անգրագէտ հովանաւորներին — կասենք. բոլորովին զուր էք ազուաւի պէս կռահում ու պտոյտ դալի ճեմարանի գլխին. բոլորովին իզուր էք լարում ձեր տեսողութեան ամբողջ կարողութիւնը՝ այնտեղ գէջ զրտնելու, գէշի վրայ նստելու... բաւականացէք ձեր քելիաներով ու մեռելներով, ճեմարանում գէջ չկայ...



53932

